**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  Կ Ո Մ Ի Տ Ե**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

---

ք. Երևան 24 սեպտեմբերի, 2018 թ.

**Հ Ր Ա Մ Ա Ն № 40-Ա/Ք**

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՏՎՈԳՐԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 12-րդ կետերը՝

***Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ.***

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի պատվոգրեր շնորհել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթին մասնակցած արտասահմանյան փորձագետներին՝ մրցույթի անցկացման աշխատանքներին անշահախնդրորեն մասնակցելու և արհեստավարժ փորձաքննություն իրականացնելու համար:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Մարդոյանին:

**Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**